

ՎԱՅՐԱՄ ՏԵՐ-ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՎԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Թե՛ Օսմանյան կայսրության և թե՛ Թուրքիայի հանրապետության տարիներին բանակը մշտապես ունեցել է անքննելի հեղինակություն: Կայսրության ժամանակաշրջանում բանակը սերտաճել էր պետական բյուրոկրատական համակարգի հետ և դարձել մեկ ամբողջություն: Անկախացումից ի վեր նոր սերնդին կրթում էին հարգել ու փայփայել երկրի անկախ գոյության միակ երաշխավորի՝ բանակի պատիվը, իսկ հասարակության գիտակցության մեջ ներարկվում էր անպարտելի թուրքական բանակի միայն պատմական նվաճումները:

Հանրապետության հիմնադրի՝ Քեմալ Աթաթյուրքի ռազմական անցյալն ու նրա անձնավիրույթը երկրին էլ ավելի ամրապնդեցին բանակի դերն ու նշանակությունը: Ուշագորավ էին մաս Աթաթյուրքի հայացքները բանակի ու քաղաքական կյանքի փոխհարաբերությունների վերաբերյալ: Դեռ սպայական ծառայության տարիներին նա եկել էր այն համոզման, որ բանակին հարկավոր է զսպել քաղաքական կյանքին ուղղակիորեն մասնակցելու բոլոր հնարավոր ուղիներից, այլապես բանակը վերածվում էր քաղաքական գործիքի և շեղվում սեփական առաքելությունից: Ավելին, հանրապետության հիմնադրման տարիներին նա կտրականապես դեմ արտահայտվեց զինվորականներին տեղ զբաղեցնել երկրի խորհրդարանում, քանի դեռ նրանք վայր չէին դրել ուսադիրները¹: Թվում էր՝ բանակի և քաղաքականության միջև սահմանագծի նման տարաբաժանումը այլևս երբեք չէր դառնալու քննարկման առարկա, քանզի այն սահմանված էր թուրքերի հավերժ առաջնորդի՝ Աթաթյուրքի կողմից:

Իրականում, ինչպես ցույց տվեց հանրապետության 80 տարիների պատմությունը, բանակը ոչ միայն չդադարեց երկրի քաղաքական կյանքին միջամտել, դեռ ավելին դարձավ Թուրքիայի քաղաքական գործընթացների առանցքային ուղիները սահմանող, դրանց իրագործումը հսկող լրջագույն գործոնի՝ հանդես գալով երկրի պաշտոնական գաղափարախոսության

աթաթյուրքիզմի (կամ քեմալիզմի) մոլեռանդ ջատագովների դիրքերից: Հանրապետության հիմնադրման տարիներից ի վեր (1923թ.) ընդհուպ մինչև 1950-ական թվականները բանակի և նրա ղեկավար կազմի քաղաքական զարգացումների վերաբերյալ դիրքորոշումը խոսում էր գգուշավոր չեզոքության մասին: 1950-ականների կեսերին, երբ երկրում իշխում էր Դեմոկրատական կուսակցությունը, բանակի ղեկավարները, սպայական կազմը առավել հաճախակի էին սկսել քննադատել նրա քաղաքական ուղեգիծը, որը, նրանց կարծիքով, լիովին հակասում էր Աթաթյուրքի նախանշած առաջընթացի ուղուն: Վերջինիս հիմնադրած Ժողովրդա-հանրապետական կուսակցությունը (հետայսու՝ ԺՀԿ), որը 1950-1960թթ. ընդդիմությունում էր, սկսեց հրահրել բանակին միջամտել քաղաքական կյանքին և երկիրը վերադարձնել «Ճշմարիտ ուղուն»: Գեներալ Ջեմալ Գյուրսելի ղեկավարությամբ մի խումբ գեներալներ ու սպայակազմի անդամներ (37 անձ), անսալով ԺՀԿ-ի և հատկապես Աթաթյուրքի զինակցի՝ Իսմեթ Ինոնյուի հորդորներին, 1960թ. մայիսի 27-ին իրականացրին առաջին ռազմական հեղաշրջումը, որին հետևեցին դաժան հաշվեհարդարների մի անվերջ շղթա՝ կախաղան հանվեց երկրի վարչապետ Մենդերեսը, գնդակահարվեցին երեք նախարարներ, ազատագրվեցին ենթարկվեցին կառավարության բազմաթիվ անդամներ: Հարկ է նշել, որ հեղաշրջման հեղինակները սեփական քայլերը ներկայացրեցին, որպես «առողջ բանականության արտահայտում», որի նպատակը, որչափ էլ զավեշտորեն հնչի, Ժողովրդավարության վերականգնումն էր ու հաստատումը: Հեղաշրջմանը հետևեց մի շարք նորամուծություններ, որոնք հիմնականում ամրագրվեցին 1961թ. ընդունված նոր սահմանադրությունում: Ըստ իս, առաջին ռազմական հեղաշրջման ամենաեական արդյունքը արտացոլվեց Ազգային Անվտանգության Խորհրդի (հետայսու՝ ԱԱԽ) ստեղծման գաղափարի մեջ, երբ ՋՌԻ-ի հրամանատարները և Գլխավոր շտաբի պետերը երկրի անվտանգությանը սպառնացող խնդիրների դեպքում կարող էին ուղղակիորեն միջամտել քաղաքական անցուդարձին: Այսպիսով, ինչպես Սակալիողլին է իրավացիորեն նշում, երկրում ստեղծվեց երկգլուխ պետական համակարգ, երբ նախարարների խորհրդին կից գործում էր ԱԱԽ-ն, իսկ ռազմական դատական համարկարգի կողքին գործում էր քաղաքացիական արդարադատության համակարգը²:

Թվում էր՝ նոր հիմնական օրենքի շնորհիվ երկրում իրավիճակի կայունացման լուրջ հիմքեր էին ստեղծվել: Սակայն ներքաղաքական անվերահսկելի բռնություններին վերջ տալու նպատակով 1971թ. մարտի 12-ին տեղի ունեցավ երկրորդ ռազմական միջամտությունը, որը ստացավ «Հուշագրային հեղաշրջում» անվանումը: Ցամաքային, ռազմաօդային և ռազմածովային ուժերի

գլխավոր հրամանատարները՝ Գլխավոր շտաբի պետ միասին, իշխող կառավարությանը ներկայացրին հուշագիր հետագա անհրաժեշտ քայլերի վերաբերյալ, հակառակ դեպքում խոստանալով օգտագործել օրենքով սահմանված լիազորությունները կայունության հաստատման և պետության ամբողջականության պահպանման նպատակով: Արդյունքում կրկին, ինչպես և նախորդի դեպքում, Սուլեյման Ղեմիրելի գլխավորությամբ գործող կառավարությունը վայր դրեց իր լիազորությունները՝ զիջելով զինվորականների համար նախապատվելի քաղաքական ուժին: Քաղաքացիական իշխանությունը մնաց զինվորականների աջալուրջ հսկողության ներքո մինչև 1973թ. խորհրդարանական ընտրությունները:

1970-ականների վերջին ներքաղաքական կյանքը վերածվել էր իսկական քաոսի, երբ փողոցային բռնությունները ու սպանությունները, ազգայնամոլ ու ծախսկողմյան ուժերի միջև բախումները դարձել էին լրջագույն ապակայունացնող գործոններ: 1978-80թթ. ընթացքում երկրում սաստկացած անիշխանությունը մոտ 5,400 մարդու կյանք էր խլել, իսկ 14,200-ը ենթարկվել էին զանազան բռնությունների՝ դառնալով անդամալուծներ³: Այս դեպքերը պատճառ հանդիսացան, որպեսզի ՁՈՒ-ը ձեռնարկեն հերթական, իր տրամաչափով աննախադեպ, ռազմական հեղաշրջումը, որն իրականացվեց 1980թ. սեպտեմբերի 12-ին: Գլխավոր Շտաբի պետ գեներալ Էլյենի ղեկավարությամբ իրականացված հեղաշրջումը կրկին հետապնդում էր նույն նպատակները՝ վերականգնել ժողովրդավարական կարգերը, հաստատել օրենքի գերակայությունը: Նրանք ցրեցին խորհրդարանը, կառավարությունը (ի միջի այլոց, այս անգամ ևս հեղաշրջման պահին գործող վարչապետ կրկին Ա. Ղեմիրելն էր), արգելեցին բոլոր քաղաքական կուսակցությունների, արհմիությունների, քաղաքական խմբավորումների գործունեությունը, երկրում սահմանվեց խստագույն գրաքննություն: Հեղաշրջմանը հաջորդած չորս տարիների ընթացքում ԱՄԽ-ը ձերբակալեց 178,500 քաղաքացու, 106,200-ի նկատմամբ քրեական գործեր հարուցվեցին, 326-ը դատապարտվեցին մահվան և 27-ը ենթարկվեցին մահապատժի՝ «քաղաքական և գաղափարական հանցանքների համար»⁴: ԱՄԽ-ն ընդգծված բացասական մոտեցում ցուցաբերեց այն լրագրողների, հասարակական-քաղաքական գործիչների, մշակույթի և կրթության ոլորտի աշխատակիցների նկատմամբ, որոնք իրենց գործունեությամբ որակվել էին որպես ձախ, սոցիալիստական գաղափարախոսության ջատագովներ, մոտ 100 մեծ գործիչներ ենթարկվեցին ազատազրկման տարբեր ժամանակահատվածներով⁵:

Շուրջ երեք տարի բանակը դարձել էր երկրի միանձնյա ղեկավարը, թեև նրանք հեղինակեցին նոր, թվով երրորդ սահմանադրությունը, անցկացրեցին նոր ընտրություններ, այնուհանդերձ պարզ էր, որ ՁՈՒ-ի միջամտությունը քաղաքական կյանքին դարձել էր միանգամայն բնականոն երևույթ: 1982թ. սահմանադրությունն էլ ավելի ընդարձակեց ՁՈՒ-ի առանց այդ էլ լայն լիազորությունները: Ինչպես Մոմայեզին է նշում. «նոր սահմանադրությունը միտված էր ամրապնդելու թուրքական բանակի գերակա դիրքերը, որպես քաղաքական համակարգի պահպան և դատավոր»⁶: 1982թ. սահմանադրության 118-րդ հոդվածով ԱՄԽ-ի որոշումները և դիրքորոշումները կառավարության համար ունեին անքննելի նշանակություն և ենթակա են անվերապահ իրականացման: Սահմանադրական դրույթների և կանոնադրության համաձայն ԱՄԽ-ի նիստերը գումարվում են ամիսը մեկ անգամ: Երկրի զինված ուժերը ապահովում են ԱՄԽ-ի 10 անդամներից 5-ը: ԱՄԽ-ի քաղաքացիական անդամներ են հանդիսանում՝ երկրի նախագահը (որը նախագահում է նիստերը), վարչապետը, պաշտպանության, ներքին և արտաքին գործերի նախարարները, իսկ Գլխավոր շտաբի պետը, ցամաքային, ռազմածովային և ռազմաօդային ուժերի հրամանատարները, ինչպես նաև ոստիկանության պետը ներկայացնում են ռազմական թևը⁷:

1990-ականների սկզբին տեղի ունեցող ներքաղաքական խմորումները մի շարք առումներով հիշեցնում էին մինչ երրորդ ռազմական հեղաշրջումը տիրող մթնոլորտը և պատահական չէր, որ միջլուսակցական պայքարի սրումը, հին քաղաքական գործիչների բեմելը և սոցիալ-քաղաքական ու տնտեսական խնդիրների սրացումը կրկին պատճառ հանդիսացան հասարակության մոտ խորը հիասթափության: Թուրքիայի պատմության հայտնի գիտականեր Ուլիլհամ Չելլը և Ֆերոզ Ահմադը համամիտ էին, որ հիշյալ ժամանակահատվածում հեղաշրջման իրականացման նախապայմանները առավել քան հասունացել էին և իրական վտանգ էր ստեղծվել մեկ այլ ռազմական միջամտության իրականացման համար⁸: Սակայն բանակը հերթական միջամտությունն իրականացրեց միայն 1997թ. փետրվարի 28-ին, երբ ԱՄԽ-ի արտակարգ նիստի ընթացքում ՁՈՒ-ի ղեկավար կազմը՝ Գլխավոր շտաբի պետ գեներալ Իսմայիլ Չակկի Կարադայու գլխավորությամբ վերջնագիր ներկայացրեց 1996թ. հուլիսից իշխող կոալիցիոն կառավարության մաս կազմող Բարօրություն կուսակցության առաջնորդ, գործող վարչապետ Նեջմեթին Էրբաքանին, երկրում կարգ ու կանոն հաստատելու, անվերահսկելի դարձած իսլամական հետադիմության դրսևորումները սանձելու ու հանրային կյանքում կրոնի տեղն ու դերը նվազեցնելու ուղղությամբ: Այսպիսով՝ 1960թ.-ից հետո չորրորդ անգամ բանակը

ներխուծեց քաղաքական թատերաբեմ՝ այս անգամ կրկին հանդես գալով աթաթյուրքիզմի և աշխարհիկ կարգերի պաշտպանության դիրքերից: «Թավշյա» կամ «հետմոդերն» անվանուճը ստացած հեղաշրջուճը կամ պարզապէս «Փետրվարի 28» կոչվող իշխանափոխության գործընթացն այլևս իրականություն էր⁹: Էրբաքանը ոչ միայն տեղի տվեց սույն պահանջներին, այլ նաև զիջեց, հրաժարական տվեց, քանզի այդպէս էր կամենում զերհզոր բանակի հրամանատարական կազմը: Գններալները մտադիր չէին կանգ առնել և 1998թ. փետրվարին Բարձրություն կուսակցության գործունեությունը արգելվեց: Յուտայի համալսարանի պրոֆեսոր Դական Յավուզը նշում է, որ «Փետրվարի 28-ը» փաստեց, որ «սպիտակ թուրքերը» մտադիր չեն «սև թուրքերին» ու քրդերին զիջել քաղաքական և տնտեսական իշխանությունը և սեփականաշնորհման գալիք փուլում հանդուրծել վերջիններիս մասնակցությունը: Նա առանձնացնում է փետրվարի 28-ի հեղաշրջման երկու պատճառ՝ ա) չեզոքացնելով իսլամամետ ուժերին՝ բանակը գտեց հանրային ոլորտը, բ) երկրի հզոր բյուրոկրատական ապարատը, Ստամբուլի «լրատվական բուրժուազիան» ցանկացան Սիջազգային Արժութային Դիմնադրամի պահանջած սեփականաշնորհման գործընթացում ձեռք բերել առյուծի բաժինը, որի համար հարկավոր էր ստեղծել առավել կախյալ կառավարություն¹⁰:

Այսպիսով, չորս տասնամյակների ընթացքում Թուրքիայի ԶՈՒ-ն իրականացրել են չորս ռազմական հեղաշրջում: Անշուշտ, ոչ բոլորն են սիրալիր խոսում Թուրքիայի պատմության այս էջերի մասին: Ավելին, մի շարք թուրք պատմաբաններ, արևմտյան գործընկերների հետ միաձայն, գովերգում են թուրքական բանակին, նրա մշտաբթուն հրամանատարությանը, երկրում ժողովրդավարությունը փայփայելու և նրա առանցքային արժեքները զարգացնելու համար: Մի շարք հայտնի թուրք և արտասահմանյան վերլուծաբաններ՝ Է. Օզբուղուն, Մ. Դեպեր, Կ. Դոդ, ընդգծում են ժողովրդավարության կերտման գործում թուրքական բանակի անգնահատելի առաքելությունը: Նրանց մեկնաբանմամբ «Եթե 20-րդ դարի ռազմական մյուս հեղաշրջումներին հետևել են դաժան, ավտորիտար վարչակարգեր, ապա թուրքական բանակն իրեն զուսպ է դրսևորել, իշխանությունը պահելով այնքան ժամանակ, որքան հարկավոր է երկրում կարգ ու կանոն վերահաստատելու համար, և դրանից հետո է միայն հեռացել՝ բեմահարթակը թողնելով իր կերտած քաղաքական գործիչներին»¹¹: Այս պնդումը մի շարք վերապահումներով կարելի է ընդունելի համարել, սակայն առավել խորքային ուսումնասիրությունն երևան է բերում անկայունության, երկրի քաղաքական կառույցների ոչ-լիարժեք գործունեության գաղափարը, այսինքն, եթե մի շարք երկրներում բանակի և զեներալիտետի

միջամտությունը քաղաքական գործընթացներին հաջորդել է նրանց քիչ թե շատ երկարատև ներկայությունը կամ ավտորիտար ու անհատական վարչակարգերի հաստատումը (օրինակ՝ Ֆրանկոյինը Իսպանիայում (1936-75), Գամալ Աբդել Նասսերինը Եգիպտոսում (1954-70) մի շարք այլ ռազմական հեղաշրջումներ Արգենտինայում, Բրազիլիայում, Չիլիում, Ֆիլիպիններում և այլն), ապա Թուրքիայի պարագայում գործ ունենք շատ ավելի ծայրահեղ դրսևորման հետ. օրենսդրության շրջանակներում մշտապես առկա է ՁՈՒ-ի ցանկացած պահի ներխուժման սպառնալիք: Ավելին, եթե մի պահ ընդունենք, որ բանակի դերի վերաբերյալ վերոհիշյալ դատողությունները միանգամայն ընդունելի են, ապա չորս հակափաստարկ կարող են լիովին այլ դիտանկյունից ներկայացնել իրերի դրությունը.

ա) թուրքական բանակը մշտապես գտնվում է քաղաքացիական իշխանությունների կողքին (ուշագրավ է, որ սույն միտքը նաև տառացիորեն է ճիշտ, քանզի Անկարայում գտնվող բանակի Գլխավոր կենտրոնակայանը, որտեղ տեղակայված են մեծ քանակությամբ զորքեր ընդամենը մեկ փողոցով է բաժանված խորհրդարանի շենքից), ուստիև երկրի ներքին գործընթացների հսկողության և պաշտպանի նրա հեղինակությունը ապակայունացնում է ներքաղաքական իրավիճակը (ի դեպ, Թուրքիայի խորհրդարանի շենքը հսկվում է ոչ թե անվտանգության ուժերի կամ ներքին զորքերի, այլ բանակի հատուկ ստորաբաժանման կողմից):

բ) Բանակն օժտված է ներքաղաքական զարգացումների վրա ազդելու ուղղակի և անուղղակի լծակներով: ԱՄԽ-ը ամենակարևոր և առաջնային ինստիտուցիոնալ խողովակն է, որով բանակը վերահսկում է քաղաքական գործընթացները և իրականում հենց այս կառույցին է վերապահված երկրի ղեկավարումը: Վերջին 20 տարիների ընթացքում ԱՄԽ-ի գործառույթների շրջանակը աննկարագրելիորեն ընդլայնվել է՝ ընդգրկելով ամենատարբեր ոլորտներ՝ դպրոցական դասացուցակների կազմում, հեռուստաընկերությունների հեռարձակման ժամերի կանոնավորում, քրդական շարժման հետ առնչվող պատգամավորների անձեռնմխելիության վերացում, երկրի հարավ-արևմտյան հատվածում քաղաքացիական ծառայողների ընտրություն և նշանակում, քաղաքական կուսակցությունների նկատմամբ վերահսկողության իրականացում և այլն¹²:

գ) Ձինված ուժերի ղեկավարությանն է պատկանում ազգային անվտանգության հայեցակարգի մշակման, դրան սպառնացող վտանգների սահմանման մենաշնորհային դերը: Այս դրույթն իր հերթին ենթադրում է, որ ներքաղաքական զարգացումների ամբողջ ընթացքն աչալըջորեն հսկվում է

բանակի կողմից, և քաղաքացիական իշխանությունների ցանկացած քայլ, որը բանակի ընկալվածք և խիստ նեղ մեկնաբանմամբ կրում է ազգային անվտանգությանը սպառնացող դրույթ, արժանանում է բանակի կամայական գնահատականին, որին հաջորդող ցանկացած քայլի լեգիտիմությունն էլ սահմանվում է բանակի ազգային անվտանգության երաշխավորի դրույթով:

դ) Թուրքական բանակի դիրքորոշումը մյուս երկրներից զանազանվում է նաև այն առումով, որ հեղաշրջման իրականացումը և քաղաքական ասպարեզից հետագա հեռացումը տրամաբանորեն ենթադրում է, որ գեներալները հավուր պատշաճի հոգ են տարել, որպեսզի կատարված փոփոխությունների շարունակությունը ապահովվելու համար քաղաքական հետագա ղեկավարումը հանձնված լինի նորահայտ, միևնույն ժամանակ վստահելի և կարողունակ ուժերին: Այնինչ, յուրաքանչյուր ռազմական հեղաշրջումից հետո, նոր քաղաքական անհատների հայտնաբերման փոխարեն բանակը քաղաքական բենը գիշում էր, ենթադրաբար նոր, իրականում հին ժամանակների քաղաքական պիտակը կրող ուժերին և գործիչներին. օրինակ 1960-61թթ. հեղաշրջումից հետո իշխանության էին գալիս մերթ ԺՅԿ-ն, մերթ էլ Դեմկուսից սերված Արդարություն կուսակցությունը, 1971-73թթ. հեղաշրջումից հետո կրկին թույլատրվեց Արդարություն կուսակցության գործունեությունը, 1980-83թթ. հետո թեև բոլոր քաղաքական կուսակցություններն արգելվեցին, սակայն վերջիններիս առաջնորդները միառժամանակ հետո վերադարձան քաղաքական թատերաբեմ՝ փոփոխված քաղաքական կուսակցությունների գլուխ անցած, 1997թ. ռազմական միջամտությունից հետո թեև արգելվեց Բարօրություն կուսակցության գործունեությունը, սակայն վերջինիս շուտափույթ կերպով փոխարինեց իսլամական կողմնորոշում ունեցող մեկ այլ կուսակցություն՝ Առաքինություն վերտառությամբ:

Այսպիսով, վերոհիշյալ մեկնաբանությունը Թուրքիայի զինված ուժերի պատմական անքննելի առաքելության և ժողովրդավարության բաստիոնի առումով ընկրկում են խորը և համակարգային վերլուծության դեպքում: 1960 և 1971 թվականների ներխուժումների ՕԳԳ-ը վերոհիշյալ բռնությունների, սպանությունների անվերջ շղթան էր: Այլ կերպ ասած, այն թյուր միտքը, թե երկրի զինված ուժերի մուտքը քաղաքական թատերաբեմ ժողովրդավարության հաստատման, ամրապնդման կայուն զարգացման գրավականն է, առնվազն անհիմն է: Ասել է թե բանակից ավելին ակնկալելը ցանկալին իրականության տեղ ընդունելուն է հանգույն: Անսխալ համարվող թուրքական բանակը քանիցս սայթաքելով՝ անկարող գտնվեց ստեղծել նոր քաղաքական համակարգ, որի թելադրած խաղի կանոնները պետք է հրապարակ բերեին նոր դերակատար-

ների: 1982թ. սահմանադրությունը նախանշված էր կարգավորելու քաղաքական այնպիսի զարգացումներ ինչպիսիք գեներալիտետն էր ցանկանում, սակայն, ինչպես նշում է Կրամերը, ՁՈՒ-ի ղեկավար կազմը թերազնահատեցին երեք տասնամյակ ավանդույթ ունեցող խորհրդարանական կառավարման արդյունքում հասարակության քաղաքականացվածության աստիճանը: Ավելին, հենց գեներալիտետի քայլերն արգելք հանդիսացան նախապես մշակած քաղաքական մթնոլորտի ձևավորման համար, և նմանատիպ քայլերից առանց-քայինը ավանդական համամասնական ընտրական համակարգի պահպանումն էր: Կրամերի կարծիքով, եթե բանակն իրոք նախատեսում էր երկբևեռ քաղաքական դաշտի ստեղծում և դրանով հանդերձ նորակերտ քաղաքական իրականության սերմանում, ապա մեծամասնական ընտրական համակարգի ներմուծումը կարող էր ազդեցիկ խթան հանդիսանալ քաղաքական որակապես նոր իրականության ձևավորման եւ ամրապնդման համար¹³:

Ուշագրավ է նաև 1990-91 թթ. իրականացված ուսումնասիրություններից մեկի արդյունքները, որը նպատակ ուներ ուսումնասիրել գործող քաղաքական ինստիտուտների վստահելիության աստիճանը: Այսպես, հարցվածների 50,3 տոկոսը լրիվ կամ մասամբ էին վստահում Թուրքիայում գործող պետական կառույցներին, 41,9 տոկոսը նման վերաբերմունք ուներ Թուրքիայի Ազգային Սեռ ժողովի նկատմամբ, այս թվերի կողքին ՁՈՒ-ն ուներ 91,4 տոկոս վստահություն, կրոնական հաստատությունները՝ 67,1 տոկոս, կրթական համակարգը՝ 66,8 տոկոս, իսկ ոստիկանությունը վայելում էր հարցվածների 63,4 տոկոս վստահություն: Թեև նման գնահատականի վերլուծությունը դյուրին չի կարող լինել, այնուհանդերձ այն որոշակիորեն հստակեցնում է, որ հասարակությունում երկրի ՁՈՒ-ն ունեն ոչ միայն երկրի անվտանգության երաշխավորի հեղինակություն, այլ նաև նրանք հանդիսանում են այն վերջին հանգրվանը, ուր կարող է սկեռվել հասարակության հայացքը երկրում առկա հրատապ խնդիրների լուծման համար: Հետևաբար կարելի է որոշակի վերապահությամբ պնդել, որ ռազմական միջամտությունները թեև բացառապես զինվորական նախաձեռնություններ են, այնուհանդերձ հասարակության որոշակի շրջանակներ հավանությամբ են ընդունում նման համարձակ քայլերը:

1997թ. փետրվարի 28-ին սկիզբ առած գործընթացը ունեցավ մի շարք կարևոր հետևանքներ ևս: Այն որոշակի առումով ընդգծեց 1980թ. սեպտեմբերի 12-ի գործադրած նպատակների ավարտը, որն ըստ էության կրոնն օգտագործում էր որպես միջոց էթնիկական (քրդական) և կրոնական (ալեվիներ) քաղաքական շարժումների դեմ պայքարելու համար: Յավուզի կարծիքով, շատերի համար բանակի պատմական կերպարը ևս կրեց ձևափոխություն, որն

ել որոշակի առումով քայքայեց բանակի նկատմամբ վստահության մթնոլորտը¹⁴: 2000 թ. հրատարակած հոդվածներից մեկում Յավուզը ուշագրավ թեզ է քննարման ներկայացնում՝ նշելով, որ ՁՈՒ-ի և ալեվիների կրոնական փոքրամասնության միջև վերջին շրջանում նկատվող ջերմությունը պատահական չէր, քանզի գեներալիտետը մշակել էր նոր մարտավարություն՝ «Քեմալիզմի ալեվիացում»: Նոր մարտավարության հիմնական շարժառիթը ՁՈՒ-ի ցանկությունն էր ստեղծել հակակշիռ սուննի մեծամասնության աճող հզորության դեմ և ալեվիների շնորհիվ ընդլայնել քեմալիզմի սոցիալական բազան¹⁵:

Բանակի հսկայական դերը Թուրքիայում ժողովրդավարության արժեքների տհասության գլխավոր պատճառներից մեկն է: Բանակը մնում է փակ, կատարած յուրաքանչյուր քայլի համար հաշվետու լինելով միայն իրեն: Մամլո ասուլիսները, հարցազրույցները բացառիկ են, բանակը չունի նաև պաշտոնական խոսնակներ: Նրա դերակատարությանն ըստ էության երկակի գնահատական կարելի է տալ. ա) պետության անվտանգության երաշխավոր և բ) քաղաքացիական զարգացումների զսպաշապիկ: Եվրոմիության անդամակցության կարևորագույն պահանջներից մեկը քաղաքական գործընթացներում երկրի ՁՈՒ-ի գրեթե անսահմանափակ իշխանության վերանայումն է: Եվրոմիության տարբեր պաշտոնյաներ բազմաթիվ առիթներով հայտարարել են, որ անհանդուրժելի է Թուրքիայի ՁՈՒ-ի քաղաքականացման նման աստիճանը, ուստիև բանակի լիազորությունների կրճատումը, քաղաքական կյանքում նրա իրականացրած ոստիկանական գործառույթները հարկավոր է վերացնել, այդ են պահանջում նաև 1993թ. ընդունված «Կոպենհագենյան չափորոշիչները»¹⁶:

Այժմ, երբ կառավարությունը և խորհրդարանը ղեկավարում է սոցիալ-պահպանողական, չափավոր իսլամական հայացքներ դավանող Արդարություն և զարգացում կուսակցությունը, որը իշխանության եկավ 2002թ. նոյեմբերյան տպավորիչ հաղթանակից հետո, իրական հնարավորություն էր ընձեռվել երկրում վերոհիշյալ բարեփոխումների իրականացման: 2003թ. հուլիսի 23-ին խորհրդարանը կողմ քվեարկեց «Բարեփոխումների յոթերորդ փաթեթ» կոչվող փաստաթղթին, որը անկյունաքարային իրադարձություն է բանակի ապաքաղաքականացման ու քաղաքացիական իշխանություններին ենթակա կառույց դարձնելու ոգծարին ճանապարհին: Հարկավոր է հույս հայտնել, որ միայն ներքաղաքական կայունության ու օրենքների անվերապահ կիրառման դեպքում հնարավոր է ակնկալել, որ Թուրքիան ունակ կլինի վերանայել իր պատմության սև էջերը և դրանք ընթերցել առողջ բանականության ու զղջման դիրքերից, միայն այդ դեպքում Հայաստանի Հանրապետությունը կարող է հուսալ, որ գործ ունի ոչ թե մեծապետական գաղափարներ դավանող ու

Աթաթյուրքի ժամանակավրեպ գաղափարները կուրորեն կիրառող թուրքական վերնախավի հետ, այլ քաղաքացիական հասարակության տարրական սկզբունքները սերտած և դրանով ուղղորդվող քաղաքական առողջ ուժերի ներկայացուցիչների հետ:

¹ Momayezi Nasser, Civil-military relations in Turkey, *International Journal on World Peace*, 15/3, 1998, p. 3.

² Sakallioğlu Çizre, The Anatomy of the Turkish Military's Autonomy, *Comparative Politics*, 29/2, 1997, p. 157.

³ McFadden, J. H. "Civil-military relations in the Third Turkish republic", *Middle East Journal*, 39, 70, 1985

⁴ Kedourie Elie. Politics in the Middle East, Oxford University Press: Oxford New York, 1992, p. 142

⁵ Ersan Torsun, Turkey's battered democracy, *Index on censorship*, 11/1, 1982, p. 14, 15

⁶ Momayezi, 1998, p. 13.

⁷ Jenkins Gareth, Context and circumstance: The Turkish Military and Politics, Adelphi paper 337, London, 2001, p. 19

⁸ Hale William, Turkish politics and the military, London: Routledge, 1994, p.296; Ahmad Feroz, The making of Modern Turkey, Routledge, London and New York. 1993, 199

⁹ Raudvere Catharina, The Book and the Roses: Sufi women, visibility and Zikir in Contemporary Istanbul, Malmö, Bjärnum, 2002, 51; Yavuz Hakan, Cleansing Islam from the public sphere, *Journal of International Affairs*, 54/1, 2000, p. 35; Jung Dietrich & Piccoli Wolfgang, Turkey at the crossroads: Ottoman legacies and a greater Middle East, London: Zed Books, 2001, p. 96; Çandar Cengiz, Redefining Turkey's political centre, *Journal of Democracy*, 10/4, 1999, p.130

¹⁰ Yavuz Hakan, Cleansing Islam from the public sphere, *Journal of International Affairs*, 54/1, 2000, p. 32

¹¹ Heper Metin, Historical dictionary of Turkey, Metuchen, N.J.: Scarecrow Press, 1994; Dodd, Clement H., The crisis of Turkish democracy, Huntingdon: Eothen Press, 1990, Özbudun, Ergun Contemporary Turkish politics: Challenges to Democratic consolidation, London, Boulder: Lynne Rienner Publishers, 2000

¹² Sakallioğlu, 1997, p. 158

¹³ Kramer Heinz, A changing Turkey. The challenge to Europe and the US, Brookings Institution Press, Washington D.C., 2000, p. 25

¹⁴ Yavuz, 2000a: 39

¹⁵ Yavuz Hakan, Turkey's Fault lines and the Crisis of Kemalism, *Current History*, Jan., 99, 2000b, 38

¹⁶ European Council in Copenhagen 21 - 22 June 1993. Conclusions of the Presidency. Available at http://www.europarl.eu.int/summits/copenhagen/default_en.htm